

ՎԵՆԵՏԻԿ

ԱԶԳԱՅԻՆ ԱՇԽԱՐՀԱՆՈՒԹՅԱՆ

ԱՅՍՄ ամի, 'ի 1 Մայիսի, տեղի ունեցաւ 'ի վենետիկ՝ իտալիոյ վեցերորդ ազգային աշխարհահանգէսն:

Բարձր 'ի 1870, և ապա Միլան, Նեապոլիս, Դուրին, Հռոմ, հետզհետէ հանգիստացին իտալիոյ գեղարուեստից զարգացումն. վենետիկ, իւր կարգին, 'ի ցոյց հանեց միանգամայն իտալական արուեստից յեօթն և տասն ամաց հետէ, մեծամեծ և դարմանալի ճիւղն և յառաջադիմութիւնն: Սակաւ ուրեք, աշխարհահանգէսն, իբրև յընտրութիւն տեղւոյ, այնչափ համակրական ընդունելութիւն գտած է, որպէս աստանօր. գեղանկար և կարմրերանդն վենետիկ՝ Նշաւաւոր է իւր պատմական յիշատակարանօքն, գեղածիծաղ երկնիք, ջրով և արուեստիւ: Նորահառոյց գեղեցկաչէն կերտուածն, 'ի չափ 7246 քառ. մետր՝ կ'ամբառնայ հասարակաց պարտիզին մէջ, յեզր սուրբ Մարկոսի լճին: Իւր հրապուրիչն՝ հակապատկերն է. ոսկեփայլ մայր եկեղեցին, դքսին ճարտարարուեստ պալատն, և վենետիկոյ հռչակաւորագոյն շինուածոց կիսաբոլոր մեծ աղեղն, ու պարալաւիկ գեղազուարթ կղզեակքն արշիպելագոսին, բանաստեղծօրէն ցանեալք 'ի կապուտակ լճակին, զոր հարիւրաւոր թեթևերն թաց կօկոտօյալք մանուածապատ կը բեկնեն:

Կեն, հեղաժուռնչ զալիքն յոտս իւր խորաուկելով. ահա հրապուրեքն վենետիկոյ:

Հասարակաց պարտէզն միակ գալարազարդ ճեմելիքն է քաղաքիս: Նափօղէոն Մեծն եկեղեցիս, վանատունս և հիւանդանոց մի աւերելով, փոխարէն կառուցած է և պարզեւած քաղաքացւոց այս իրենց ցանկալի ճեմելիքն, որ զարդիս՝ աշխարհիս գեղեցկագոյն տեսարանաց մին կ'ընծայէ:

Այլն ամենայն 'ի վենետիկ իւր հնութիւնն պահած է 'ի փողոցս, յեզր ջրանցից չկտն ծառատունիք և պարտէզք: Այլ մերթ ընդ մերթ որթատունկն բաղեղ մի կը նշմարուին հինաւուրց կարմրագոյն սրմոյն վերայ թափառական մաղցյեղով, որ գեղանկար անկիւն մի կը յօրինեն յեզր ջրանցին, և նկարչին խանդն կը զարթուցանեն:

Ճիօրծիօնէ, Դիցիանօ, Դինդօրէդդօ
Պօղոս վերոնեցի երկար ժամանակ զե-
դերեցին աստանօր հիացմամբ, արուես-
տի յայդ գիցուհայն՝ իւր օղոյն, տե-
սարանաց և երանդոց գաղտնիքը դրա-
ւելու: Համբաւաւորն արգէն Ալպերգօ
Տուրացցօ, ուսումնիւ իւր գար աստ 'ի
վինետիկ, ուր քարն և կճեայն, ջուրն
և երկին արուեստ կը բարբառին:

Այսպէս ուրեմն, գեղոյ հանապա-
զորդ յաճախութիւնն՝ զվնետիկեայս
նրբաճաշակ դատաւոր ըրած է գեղա-
րուեստից:

Այս օրինակ ուրեմն, 'ի բնութենէ և
յարուեստէ ընտրեալ տաճարի մի մէջ՝
Հանդրին ալեաց Դշխոյն զաշխարհա-
հանդէսն կը հիւրընկալէր:

Ութ ամսէ 'ի վեր գործունեայ ե-
ռանդուն աշխատութիւն մի կը տիրէր
աստ: Ի սակաւ ժամանակի ամբար-
ձան կրկին կարգ երկայնաշար սրա-
հից, միմեանց զուգահեռականք, մա-
սամբ ևս ծառատնկովք և հովանաւոր
բլրակով մը ծածկուած. ամենայնն
փայտակերտ՝ բայ 'ի գոհարաց սրահէն:

Երեք մեծամեծ դաստակերտք, կի-
սաբլոր չափաւանաւ գորդարեալք,
չինուածոյն չափակցութեան հաւասար
միակերպութիւնը խափանած են: Մին
'ի մուտս պարտիղին, երկրորդն՝ եզա-
կան գեղեցկութեամբն 'ի ծայր բլրա-
կին, և երրորդն՝ ութանկին 'ի միջա-
վայրն աշխարհահանդիսին, 'ի լճակն
հայելով:

Ժամանակն կը խուճապէր. սակայն
եղեկարական լուսով զիշերի նորոգեցան
ծառուղիք, ջրացոյտ աւազանք կառու-
ցան, և գեղանի տնակք տատ և անդ-
ցիրեցան կենդանացուցին հաճոյատե-
սիլ և ճշգրտէն չափակցեալ ձեռակեր-
տուն, որոյ մեզմ' և յամենուստ հաւա-
սար լուսաւորութիւնն կը գերազանցէ
զայս աշխարհահանդէսն քան զամե-
նայն նախընթացս: Իւր նաղելի ձեռ-
արտաքնապէս յունեական ոճով գու-
նաւորեալ 'ի ջուրս ցոլանալով, կը հրա-
ւիրէ անդ գրազմութիւն բնական և
օտարաց, որովք լի է քաղաքս, երթալ

վայելել անդ ըստ ժամաց տունջեան,
միշտ նորանոր և եզակի տեսարան մի:
Վնետիկ՝ ինքնին աշխարհահանդի-
սին գեղեցկացոյն մասն է: Սակայն յա-
ռուստուն՝ տեսարանն յիւր գերազոյն
ստատիճանն է: Նորածին լոյսն՝ բազմա-
գունեան բաշխուած, 'ի ներդաշնակ
ստուերս՝ կը տպաւորէ միապաղաղ լը-
ճին մէջ զսինակս Սուրբ Մարկոսի և
Թէոդորոսի, պիողերանոցն, զՏինօրեայ
բանաս, զկղզին Սուրբ Գևորգի, զՍա-
լուդէ, զՍուրբ Ղազարն Հոյոց, զԵկե-
ղեցեակն Սուրբ Եղիստարեթի գիմարցի
ապիպոյ վրայ, և զմենայեալն Սուրբ
Հեղինէ: . . . :

Յետ սակաւուց՝ կ'անցնի լեւելայն
ոսկեղոյն ջուրց վրայ սպիտակ առա-
գաստակալ նաւ մի, խոր ակօս մը բա-
նալով գէպ 'ի հեռաւոր մութ կապտա-
դոյն Ագրիօականն: Յետոյ մակիյկ մի
թիտիկն հնչեցընելով խուսափելով կը
սահի երկնագոյն ալեաց վրայ. որոյ յա-
ջորդելով ուրուրեմն երթեկեկութեան
շոգենաւք, որ զգարթուցեալ քաղաքն
'ի ծովափն կամ 'ի կղզիս կը տանին,
զի՞ք կ'աւերին, երանգք յիրար կը
խառնին, և կը տիրէ շարժում մի ան-
ընդհատ: Բայնժամ վնետիկ 'ի ներ-
քոյ շաքոցիչ լուսոյն մոյխիս, անամպ,
հաւասարապէս կառաքադոյն երկնից
տակ, իւր հին փաճառականութեան
աւուրց օրինակ մը կ'ընծայէ:

'ի վերջալուսոյն՝ հանդիսան վերա-
դառնալով 'ի ջինջ յստակ հորիզոնին,
լուսինն խաղաղութեամբ կը բարձրա-
նայ: Վնետիկ 'ի լուսնկայ է: Յիր և
ցան լապտերք՝ նաւուց կայմերէ առ-
կալք, և խարսխոտք յարծաթափայլ
ջուրց երեսս. լաիկ կոնսուլայք՝ վնետ-
կեան լապտերք 'ի խելս, մերթ թաք-
չելով և մերթ երեւելով ընդարձակ կէս
մթութեան մէջ, կը կենդանացնեն
այս կղզիապտորդ շարժուն ամփիթէատ-
րոնն. զոր հուշակեալ համբաւեցին օ-
տարք և խաղալցի մաստենադիրք, սկը-
սեալ 'ի խնդէէ և բեգորբայց ցփալ-
տուչի և ճրակա, իսկ յօտարաց՝ 'ի Շե-
քըսերիէ ցՄիւսէ, 'ի Կայպելէ ցԼոնկելլօ:

Ահա տեսարանն՝ որում կը տիրէ աշխարհահանդէսս, և զոր կ'ընծայէ իւր այցելուացն:

Վենետիկոյ բանաստեղծական պատմական և արուեստական ոսկեգարն, թափելով դարուց խաղաղ քունն, կը զարթնու աշխարհի ժամանակացքօղոյն ներքե:

'ի 29 ապրիլի ենք. իտալիոյ միացուցին և ազատարարին նորաձոյլ թափծու պղնձէ անձանն՝ գետեղուեցու երէկ իւր պատուանդանին վրայ: Արքունականք, 'ի 1 մայիսի, պիտի վերջնեն այն քօղն՝ որ դեռ կը ծածկէ զայն յաչաց հետաքնին ամբոխին. վաղիւ կը բացուին նկարուց սրահք աշ-



ԿՈՄՍ ՏԱՆԴԵ ՍԷՐԵԿՈՅ ԱՂԼԻԿԻԷՐԻ

Մեղիկոս Վենետիկոյ

Նախագահ պատուոյ Աշխարհաֆանդիսին

խորհրդանշանին. իսկ տրհետաւորաց տաքնապն կ'աճի: Նկարիչք վերջին ձեռքը պիտի տան իրենց երկասիրութեանց. նոր ֆնարակի (vernis) տակ՝ հաղարչորս հարկուէ աւելի նկարք իրենց փայլն, երանգոց ազգուութիւնն ու լոյսն պիտի ստանան:

Հասարակաց կարծիքն ճաշակն և քննադատութիւնն, բաց 'ի նկարչաց մասնութեանց և զաղափարացն՝ ուշադիր ևս են անոնց գործադրութեանն և բացատրութեան եղանակին: Այսուհանդերձ ամենայն դէպո՛հ է, ոչ ղք յարհեստաւորաց գանգատ ունի, ա-

մենայն նկար՝ խիստ և տնողոք քննու-
թեամբ ընդունուած՝ իւր տեղը գրա-
ւած է, և իւր լոյսն կ'ընդունի վերէն 'ի
լուսամտից:

Քանզակք ես զիտեղուած են, լոյսն
կողմնակի կը լուսաւորէ զիրենք: Սը-
րահք հոծ են երեքհարիւրէ աւելի ճար-
տար գործովք, արժանաւորք ազգային
հանդիսի մը մէջ ներկայանալու:

Արուեստից մեծամեծ որահից մէջ
հաւաքուած են զեղածիծաղ, զուարթ
յախճապակեայք, կը փայլին ծանր
միւսիւնք — գոյնզգոյն շալաւայիչ ապա-
կեայք վենետիկոյ — պղինձք՝ իրենց ծա-
նօթ ծանրութեամբ՝ արտաքոյ կարգի
աչքի կը զարնեն — կահ կարասիք իշխա-
նական պերճութիւն կը քարոզեն — ոս-
կերչութեան և գոհորաց սրահքն ալ-
նախոտիղք են: Հնգեռաստան ընդարձակ
սրահքս, այնք մանաւանդ որ հովանա-
ւոր բլրոյն քոյլ առ քոյլ անզգալի էլե-
ւէջն կ'առնուն, չքեղ տպաւորութիւն
մը կ'ազդեն:



30 Ապրիլ — Յառաւուռէ աւուրս,
քաղաքս զրօշալարդ, արտաքոյ սովո-
րութեան կենդանութիւն մը կ'արտա-
յայտէ:

Արճաւանակնք իրենց մուտքը պիտի
ընեն այսօր 'ի քաղաքս:

Ի միջօրէի ամենայն տեղ և միջոց
Մեծ Զրանցիյն վրայ՝ լի և հոծ են ժո-
ղովրդեան բազմութեամբ, նկարչաց ե-
րեակայութեան հազար պատճառ և
նիւթ ընծայելով: Ասոնց մին է Ռիալ-
դոյի կամուրջն, ուր պայծառ երանգոյ
բիւր ելեւէջք, և զծագրութեանց կեր-
պարտնաց տաճարիսկ ամբոխ մը,
տանց հնաւանդ ճակատուց հետ զու-
գայարմարելով, ջրանցքին գեղեցկա-
ղոյն կէտն կրնայ համարուիլ:

Ի ժամ երկուտասան և կէս, շոգե-
նուաց երթեկութիւնն կը խափա-
նուի: Նաւակաց բազմութիւնն՝ որ եր-

թալով կ'աճի, աւելի վստահաբար յա-
ռաջ կը մասշի:

Քաղաքայիք իրենց զգացմանն ե-
ռանդան աւելի քան թէ քաղաքայե-
տութեան ձայնին ունկնդիր, տանց և
պալատանց պատուհանքն կերպասուք,
զորդովք, (յորոց շատք գոյզնադիւտ
չքելութեամբ) և ազգային դրօշակօք
զարդարեւ են:

Քաղաքապետութիւնն ընդ առաջ
կ'առաքէր արքունականայն 'ի կայա-
րանն երկաթուղոյն՝ չորս երկայնածիւ-
սրնթաց մակոյիք, ութ թիւայնարք իւ-
րաքանչիւրն, որք ընտիր ճաշակաւ դար-
դարեալք, կը ներկայացընեն աշխար-
հահանդիսիս մասնակից չորս գեղ-
արուեստքն. նկարչութիւնն, արձանա-
գործութիւնն, ճարտարապետութիւնն
և աղնուական Արուեստք:

Նկարչութեանն՝ մարմարիտի նմա-
նութեամբ, գունաւորեալ, և հին ճա-
շակաւ ոսկեղծեալ մակոյի մ'է: Ի յե-
տուսա՝ ապակեզարդ ծածք մ'ունի գեղ-
նադոյն, զոր պարսկական հին վարա-
գոյր մի կը հովանաւորէ, յորմէ կ'իջ-
նեն և ջուրց ալեաց մէջ կը կորսուին
կարմիր մետաքսեայ երկու մէզր երկոյն
ծոպեր: Յառաջոյ՝ արձան մը կը կրէ
յոսկեմիսյտէ՝ նայնգունակ աղեղ մը
ձեռքն ունեւով: Մակուկին դրօշակն՝
Սուրբ Մարկոսին է, Աստ և անդ ալ
բաղեղ և ծաղիկք սիւսուած են:

Արձանագործութեանն կապտաղոյն
է ոսկաւ խառն: Ծածկոյն 'ի կապոյտ
մետաքսեայ՝ ոսկի վերջաւորք, 'ի յե-
տուսա երկնապոյն մետաքսեայ երկար
ծոպեր 'ի ջուրս ընկզմեալ սպիտակ ար-
ձանիկ մը յառաջոյ, և առիւծ մը (վե-
նետիկոյ կնիքն) ոսկեզօծեալ: Բաղեղ և
ծաղիկք ցիրուցան սիւսուած:

ճարտարապետութեանն գեղնադոյն
ոսկաւ խառն: Սպիտակ արձան մը յա-
ռաջոյ, վերջաւորքն՝ 'ի դեղնադոյն մե-
տաքսէ, առագաստիկն՝ դունիդեան
գորգ մը, բաղեղ և ծաղիկնք:

Արուեստիցն՝ զուս վենետիկեան ոճով
է: Ծածքն 'ի կարմիր թաւ կերպասէ,
ոսկեղոյն քլանցով: Բապտեր մը կը կրէ

յառաջիկայ և արձանիկ մը՝ ոսկեզօծեալք։
'ի ջուրս ընկղմեալ վերջաւորքն՝ կար-
մրագոյն թաւշէ . բաղնիղ և ծաղիկք։

Փարթամագոյնք՝ 'ի բնակչայն և աղ-
նուականք կ'ընկերէին անոնց՝ իրենց
ճոխ և չքնաղ կերպասութք ծածկեալ
կօնառայիւքն։

Նշանաւոր էր մին համակ կապտա-

դոյն թաւշէ ոսկեծոպիւք, որոյ վերջա-
ւորքն կը կորսուէին յալիս, զոր կը յա-
րուցանէին չորք թիափարք նոյնգունակ
զգեցեալք։ Այլ մի՝ համայն կարմրա-
դոյն թաւշէ, ոսկի վերջաւորք. այլ մի՝
'ի կապուտակ մետաքսէ, այլ՝ կանաչա-
դոյն, այլ՝ դեղնագոյն. այլ մի՝ յերկնա-
զոյն անդուսէ, ձգեալ 'ի չորս մանկլաւ-



ԿՈՄՍ ՆԻԿՈՂԱՅՈՍ ՓԱՓՍՏՕՓՈՒ

ԲՈՒՆ ՆԱԽԱԳԱՌ ԱԶԽԱՐԻՈՒՄԱՆԴԻՍԻՆ

կայ, զգեստաւորեալք ըստ միջին դարու
կապտագոյն մետաքս, և հերարձակ
մազիւք, որոց վրայ կարմրագոյն փոքր
դտակ մը կը հանգչէր. այլք ևս բա-
զումք, զանազան այլաբանական հան-
դերձիւք, գունուիք և կերպասիւք. կայր
ևս ամենուկանի մի կօնառային՝ բո-
վանդակ ծաղկազարդ, առաւելապէս

'ի սպիտակ մարդարիտ ծաղիկէ՝ ըստ ա-
նուան թագուհւոյն Մարգարիտեայ։

Ծայր 'ի ծայրէ ջրանցից՝ դահլիճ մ'էր
վենետիկ, ուր հաւաքեալ էին հին և
նորարուեստական ճոխութիւն և փառք։

Անցողական դարձ մ'էր անցելոյն .
հանդէս մ'էր վեշտասաներորդ դարուն
ազնուականութեան։

վենետիկեան դեղեցիկ արև մ'ես շուղալով արծաթաթել և ոսկեհիւս՝ և 'ի ջուրց անդրադարձեալ՝ կերպասուց վրայ, կրկին կը շլացնէր գաշո՝

Այս ամենայն նաւակաց՝ կ'առաջնորդէին քաղաքապետութեան չորս մակոյթն, որոց ութ խիաւարքն զգեցեալ էին հռովմէական կայսրութեան, միւջին զարու, հնոյն վենետիկոյ և արդի ժամանակիս համազգեստները։ Կը հեռեւէր անոնց՝ քաղաքիս ասղնեգործի (dentelle) քործարանի ներկայացուցիչ նաւակն։ Համակ հրկնագոյն մետաքսեայ ենթակայի վրայ՝ մանրաթել ասղնեգործեալ, որոց ծայրքն ջրոյն մէջ 'ի քարշ կու գային յետուստ նաւակին, որ յամրաքայլ կը յառաջէր՝ ձգեալ 'ի կանանց թիւալարաց՝ Պուրանս կողմոյն, անգական տարածով զգեստաւորեալ։ Ի ժամ մի՝ ամէնքն համախմբեալ էին 'ի կայարանն՝ երկաթուղոյն մօտ, ուր յետ տասն վայրկեանի հասին թագաւորն և թագուհին արքունականգը հանդերձ։

Ժողովեալ կը սպասէին անգ քաղաքական և զինուորական իշխանութիւնք, ծերակոյտք և երեսփոխանք, անհամար ներկայացուցիչք և քաղաքիս անուականութիւնն։

Զօրաց հետեակ վաշտ մը՝ իւր զրօշակաւն և երաժշտութեամբն՝ ողջոյն մատոյց։ Հրշիջոյց զինուորաց խումբ մը երկու թեւ կը կազմէին։

Երբ ազգային երգն սկսու հնչուիլ, ժողովուրդն բռնութեամբ գիմեց 'ի կալարանն։ Արքունականք՝ իրենց կառախմբոյն հասնող անթիւ ճանապարհորդներէ և ժողովուրդներէ պաշարուած մնացին։ Ալմուկ մ'էր, չփոթութիւն էր կեցցէ՝ քաղաւորն ձայնից, որ աւեց

մինչև յիջանել թագաւորին 'ի պատրաստեալ նաւակն։

Այսպիսի պարզ և զեղուն արտայայտութիւնն՝ աւելի ևս զօրացու կալարանէն արտաքս։ Կամրջին և հանդիւպակաց ամանց վրայ խռնեալ ժողովուրդն՝ երկար ծափահարութեամբ, թաշկինակ և գլխարկ ծածոնելով ողջունեցին զինքն։ Վրձնու աննկարագրելի գեղանկար տեսարան մը կ'ընծայէր։ Սուրբ Սիմէոնի և Սուրբ Լուչիայի փոռնքն և Երկաթեայ կամուրջն։

Արքունականք իրենց մակուկին մէջ հետերինն առնելով զանդիկոս քաղաքին և զԳրիսփիլ՝ ներքին դործոց պաշտօնեայն, բաժնուեցան փոռնքէն։


Գեղեցիկ արևն՝ կ'ոսկեզօծէր երկուստեք փանեցն՝ ծաղկազարդ պառըղամօքն հին և վաղեմի պալատանց անմահական ծիծաղն։ Ի ժամ՝ երկու հանդիսաւոր չքաղիւրքազմութիւնյար՝ քունիս կը հասնէր, հոն զլխաւոր պառըղամին ստորն, 'ի Սուրբ Մարկոսի հրապարակին, վենետիկ համախմբեալ իւր երախտապարտ ողջոյնն վնհափառութեանցն կը մատուցանէր։ Կը սպասէր հոն անհամար բազմութիւն մը։ Մայր եկեղեցւոյն երկու կողմն կը ծածանէին վաղեմի վենետիկոյ այն փառահեղ դրօշակքն, որք երկար ժամանակ ծածանեցան Պունչինդօրոյի վրայ։


Երբ թագաւորն ու թագուհին երևեցան 'ի պատշգամբ՝ բոլոր հրապարակն հնչեց մեծաձայն։

Այս աւուր տեսարանն՝ թէ նաւակաց հանդերձանաց հոխութեամբ և թէ գեղեցիկ ընդունելութեամբ, կրնայ համարուիլ գոյոյնագիւտ տեսարան մը, զոր երբեք ունեցած չեն իտալիոյ իշխողքն 'ի մուստիւրեանց 'ի վենետիկ։









ՄԱՅԻՍ ՄԷԿ

ՅՍՍՐ պիտի բացուի Վիկտոր Էմանուելի արձանն: Վիկտոր Էմանուելը՝ առաջին թագաւոր Իտալիոյ, իւր արժանաւոր արձանն ունի 'ի վենետիկ:

Արժանաւոր արձան մ'է ևս վենետիկոյ ժողովրդեանն. կարգէ դուրս ուրախութեամբ ընդունեցան զնա, պարտական զոյով մեծ թագաւորիս իւր միութիւնն և անկեկալեաց իրազօրծութիւն 'ի 1859 ամէ հետէ:

Վիկտոր Էմանուէլ՝ յուսոյ, նեղութեանց և աղատութեան ժամանակն կը բովանդակէ:

Զիւս վրայ հեծեալ է զօրավարի հաղաւտով, սաղաւարտն 'ի զլուխ, 1870ի նոր համազգեստով: Զախ ձեռք ձիւս

սանձէն բռնած՝ ածուփ սուր մը կը բարձրացընէ յօգս, զօրքն 'ի յարձակումն խրախուսելու գրից մէջ:

Երկվարն զլուխը փոխարհած՝ երազ ընթացից մէջ է. թէ թագաւորն և թէ երկվարն բնական ու արի են:

Արձանն թափու ալնէ՝ կրտսիղէ մեծաբանդակ պատուանդանի վրայ կը հանգչի, որ և սա՝ չորս տասիճանօք բնդարձակադայն խորսիի մը վրայ: Պատուանդանն՝ երկու խորաբանդակի ունի, որ պատերազմաց այլ և այլ գէպքեր կը ներկայացընեն: Յառաջ պատուանդանին՝ զիւցազնուհի մը նստած է հանդարտահայեաց և յաղթական. — Վենետիկն է դքսի ոսկեճարմանդ հաղաւտով, տէր և իշխան: Յոտս իւր՝ ահեղ թեաւորեալ առիւծ մը սւրախութեան ձայն կ'արձակէ: Յետուստ խորսիսին՝ զիւցազնուհի մը պատառատուն հանդերձիւք՝ բեկեալ սուր 'ի ձեռին, յաղթուած և պատառատեալ. այլ դեռ ևս սպառնացող դրօշակ մը կը ցուցանէ. յոտս իւր թեաւոր առիւծ մը՝ հրանօթի մը վրայ ինկած յուսաբեկ և լքեալ, կը ջննայ ատամամբ՝ իւր շրջաթոյքը խորտակել. — Դիւցազնական վենետիկն է, երկու ժամանակաց՝ գերու թեան և աղատութեան հակապատկերն է 'ի 1849 և 'ի 1866:

Պատուանդանին ստորնագոյն եզերաց վրայ զինուորական նշանակօք զարդ մը կայ, և խորսիսին վրայ աղջային դրօշակն և վահան մը:

Արձանին կերպարանն կը յիշեցընէ իտալացւոց մտաց, Սափոյա տանն և Իտալիոյ՝ փառքն ու պարծանքն: Կը յիշեցընէ ևս Վիկտոր Էմանուելի երեւելի

ձեռնտուս և խորհրդականս'ի Մացյիկնէ
ցԳաուր: Հայրենասիրաց մեծամեծար
խումբն՝ որ իրենց զոհիք և գիւցազ
նական արութեամբն հանդերձանկա-
րող եղան զհայրենիս փրկելու, միանա-
լով Վ. Էմանուելի հետ՝ յԱլլայեանց ցԱ-
դրիականն ազատ կացուցին զիտալիա,
պարգևելով ժողովրդեանն անկախու-
թեան և ազգային զգացումն ունեցող
զերազոյն բարիքն:

Արձանին կանգնուամն հեռաբար շը-
քեղ հանդէս մ'էր քաղաքացուցաց հա-
մար, տոնախմբութիւն մ'էր անսահման
երախտագիտութեան, որում և բովան-
դակ քաղաքս մասնակցեցաւ:

Յառաւօտէ կտնուլա՝ քաղաքիս փո-
ղոցաց մէջ սովորականէ դուրս շար-
ժում մը կար: Բնակչաց բազմութեան
հետ՝ օտարականաց յաճախութիւնն
ևս կը տեսնուէր իտալիոյ ամէն կող-
մերէ եկած:

Մակուկաց երթևեկութիւնն անընդ-
հատ էր. ամէնքն Սուրբ Մարկոսի լճա-
կին մէջ խմբուելու կը փութային, որոյ
եզերաց վրայ կ'ամբառնայ Հեկտոր
Ֆերրարիի հուշակոտոր արձանն, որ
ծածկեալ է եռագոյն դրօշակօր:

Ի ժամ մեռտաւան՝ տաճն վայրիե-
նիւ պուկաս, հրանօթից շառաչն աղ-
դեց արքունականց յարքայակերտնա-
ւակն իջնելը:

Սոյն այս ոսկեզօծ և քանդակազարդ
նաւակաւն՝ Վիկտոր Էմանուէլ առա-
ջին անգամ զմեծ ջրանցս կը հատա-
նէր 'ի 1866 ամին:

Ժողովրդեան ամբոխն սկսաւ յայն-
ժամ զեզուլ 'ի հրապարակն և ծովա-
փանց վրայ: Հրաւիրեալք և տոմսակա-
կիրք 'ի պառնիչափակն կը գետնդին:
Նըջկալ տանց և պալատանց ամէն
պառազամն և պատուհան հանդիսա-
տեսներով լի են. մինչև երդեսաց վրայ
խօկ դիտողք կան:

Լճակիս երթևեկութեան շողենաւք
յաճախորդօք լի՝ պարիսպ մը կը ձևացը-
նեն նաւամատուցին շուրջ: Իրենցմէ
վերջ կու դան վաճառական մեծամեծ
և յաղթանդամ շողենաւք, ծայր 'ի

ծայրէ դրօշազարդ, որք եկեր Սկիա-
վնի ափանց մօտ խարսխեր են. նա-
ւաստիք կայմերու վրայ՝ թողած են
յարկն անհամար հանդիսատեսաց:

Արքունական մակդիկն, անընդհատ
և եռանդուն ծափահարութեանց մէջ
յամբաքայլ կը յառաջէ: Շինուած 'ի
1866, այն ժամանակէ 'ի վեր զգուշու-
թեամբ պահուած է զինուորական նա-
ւարանին մէջ: Զինափայլ սպիտակ դու-
նաւորեալ արուեստական ընտիր ճաշա-
կաւ ոսկեփայլ բարձրաքանդակք վար-
դազոյն ենթակային վրայ կ'երեցնէ:
Քառասկուսի սպակեզարդ ծածրն, 'ի
խելս՝ մետաքսեայ և ճոխ կերպասօք,
հայելեօք, գորգովք և ոսկեզօծ թիկնա-
թոռօք զարդարեալ է: Երկու արձանքն՝
որք յիտուտո՝ կը ներկայացնեն զՎենե-
տիկ և զիտալիա. և յառաջոյ՝ Վենետի-
կոյ նշանական առիւծն. ծայր 'ի ծայր
ամենայն ոսկեղ ճոխութիւն կը քարոզէ:

Նաւակս ունի հրամանատար մը, ղե-
կավար մը և տասն և ութ թիավարք:
Վենետիկոյ ջրերն կարած է նախ 'ի
1866, երբ յիծմն նոյնմբերի զՎիկտոր
Էմանուէլ 'ի Սուրբ Մարկոս կը բերէր:
'ի 1878 երբ արդի թագաւորն և թա-
գուհին իրենց առաջին մուտքն ըրին 'ի
քաղաքիս, և երրորդ անգամ՝ բերելով
այսօր զվիւնպերդօ և զՄարգարիտէ Ի-
րենց անմահական հօրն արձանին բաց-
ման ներկայացնելու:

Երբ նաւակս 'ի նաւակոյս կը հասնի,
ազգային երաժշտութիւնն կ'ողջունէ ըզ-
նա: Իցամար կ'եննեն Նորին վնհափա-
ռութիւնն, արքունեաց ազատօք, ար-
ձանին գործադիր յանձնախմբօք, ծե-
րակուտիւն և պաշտօնարանին ներկա-
յացուցիչներով, քաղաքական և զի-
նուորական իշխանութեամբք և հիւպա-
տից դասով իրենց համազգեստաւ:

Թագաւորին և թագուհւոյն անցած
ժամանակ՝ դրօշակք կը խոնարհին. և
երբ ամենայն դը իւր որոշեալ տեղն է,
անդիլոսի նշանին՝ արագապէս կ'ինկ-
նայ արձանին ծածկոյթն, և մեծա-
գործ կերպարանն կը ցուցանէ ալիւն-
կալու ժողովրդեանն: Բազմութեան

եռանդն ուրիշ բացատրութիւն չի գրու-
նէր, բայց եթէ 'ի կեցցէ աւրքայն աղա-
ղակէն որ յամենուստ կը հնչէ:

Յայնժամ Զօրնոնի, անդամ ծերա-
կուտի, կը սկսի հրապարակախօսել
հետեւեալ ճառն.

«Վիկտոր Էմանուէլի արձանին կանգ-

նումն, որ այնչափ յիշատակք և այն-
չափ սրտեռանդն զգացմունս կ'ազդէ,
և ևս փառաւոր ու հանդիսաւոր կերպ
մը կ'առնու այսօր, մեր օգոստոսիառ-
թագաւորին և շնորհաձիր թագուհւոյն
ներկայութեամբն:

«Առ նոցա վեհափառութիւնն՝ ժողո-



ՀՐԱՄԱՆԱՏԱՐ ԵՄԻՒՈՍ ՓԵՂԷԶԻՆԱ

Փոխանակ Նախագահի Աշխարհահամալիսին

վերջս խորին երախտագիտութիւնն կը
մատուցանեմ:

Պանծանօք միանդամայն և խորին
զգացմամբ ողջոյն կը մատուցանեմք
հօրն հայրենեաց, վիկտոր Էմանուէլ,

իտալական վերահաստատութեան չըք-
նաղ և կատարեալ պատկերն է. միան-
գամայն և կատարելագոյն և թերևս
միակ և եղական տիպարն մերոյս վե-
րանորոգման: Թագաւոր ըլլան՝ եթէ

իրենն ասպարեզն կը բանար, ոչ ինչ նուազ անհամար դժուարութիւններ իւր շուրջ կը սերմանէր: Շատ թագաւորք մտածեր են զժողովուրդն յազգ փախանցել. բազումն և խորհուրդն կը պակասէր իրենց. շատ թագաւորք երգուընցան ժողովրդոց ազատութիւնն, բայց պակասեցաւ անոնցքով հաւատքն և արիւթիւնն 'ի գործել: Ոչ երկրիս մեծամեծաց շողջորթովոց, և ոչ իշխանաց շիրմաց խնկարկու ժամանակի մէջ եմք, սակայն վիկտոր Էմանուելի յիշատակին ամէնքն ալ ճակատ կը խռնորհեցընեն. բարիք՝ զարմացեալք և զգածեալք, չարք՝ ամբլծապարտք և ընկճեալք: Խոտըական անկախութեան համար մարտնչող և ինկնող այնչափ զիւցաղանց մէջ, կեանքերնին նուիրող այնչափ ընտրելոց մէջ, վիկտոր Էմանուէլ քան զամենեւին 'ի վեր կ'ամբառնայ, թե ատարած արծուդ մը պէս:

«Ոչինչ անհաւանական կ'երեւի ինձ՝ թէ յետ այնչափ արտասուաց և արեան, հեղոյ՝ Խալիս օր մը իւր անկախութիւնն պիտի ստանար, բայց սուանց վիկտոր Էմանուելի՝ երեք պիտի չլինէր մի և աղատ: Յամենայն վտանգս մատոյց ինքչինքն՝ Խալիսի միութիւնն և ազատութիւնն ստանալու համար, և այս միութիւնն սաստիկ եռանդեամբ ուղած ժամանակն, դիպցաւ ևս իմաստութեամբ, արիւթեամբ, խոհեմութեամբ և երկայնամտութեամբ պաշտպանել զայն յանմտից և յանզգաստիցն՝ որք շատ անգամ 'ի վտանգի դրեր էին զնա: Արդ այս յանգեանդայն և վըսեմ զգացմանց անշափութիւնն, այս վեհանձն անձնանուիրութեան բնածիրն, բարւոյն այս երկաթեայ զօրաւոր կամքն, յօրհնիս Խալիսի՝ կը տեսնենք իշմած և վերընձիւղեալ վիկտոր Էմանուելի ազգատոհմին մէջ:

«Մեք՝ յիւր տա խոնարհեալ ազգէն՝ բազդ ունեցանք, տեսնել այն մարտիկն կայծակնահար նայուածքն, լսել անոր իմաստուն խօսքն, սեղմել յարգանք անոր ձեռքն, որոյ անջնջելի յիշատակն 'ի խորս սրտի կը կրնմք:

«Դուք, երիտասարդք, որք հետեւեցաք այս մեծի առնա, իւր երեսնամտոյ անարատ թագաւորութեան մէջ, հաւատացէք ձեր հարց զգացմանց, և ժառանգեցէք անոնց ձեռի թողած նուիրման և արտասուաց լեակադին յիշատակքն. զերախտիս առ վիկտոր Էմանուէլ, և զհաւատս և զհամարումն 'ի թագաւորութեան իւր վեհափառ Որդւոյն:

«Առ Մեղիկոնն՝ արժանաւոր ներկայացուցիչ քաղաքիս, կը յանձնեմ զարձանս, յանձնաժողովոյն կողմանէ, զմեծագործ ձեռակերան Հիկտոր Ֆերրարիի:

«Վենետիկ՝ որ չտեսաւ երեք իւր փողոցայ մէջ՝ ազիտութեան և աւերման հնոյ բարբարոսին մուտքն, որ չտեսաւ անմիաբանութեան և ապերախութեան նորագոյն թշնամին, ինչպէս որ պահած է այնչափ մեծամեծ և քաղաքիս պարծանաց շինուածքն, նոյնպէս պիտի աւանդէ յազգէ յազգ՝ յարգանք և անարատութեամբ այս իւր որդւոց սիրոյ և զարմանաց յիշատակն առ այն, որ կարողացաւ Խալիսի իւր մարմինն և կերպարանն զգեցընել և նոր կենաց շունչ 'ի նա շնչել:

«Քաղաքակիցք, կեցցէ Խալիսի ձայնին հետ, զոր կը հնչեցընէ պղինձ. պատասխանեն մեր սիրտն և բերանն, կեցցէ Սափոյա »:

Առ որ պատասխանեց Վենետիկ Սընգիկոնն:

«Կատարուեցաւ ուխտն: Առ վեհափառութիւնդ Ձեր, զթագաւոր Խալիսի, առ օգտաւարտ թագուհին, մեր պահապան հրեշտակին, վենետիկ անկեղծարար և սուրբ եռանդեամբ իւր ուղիղը կը մատուցանէ յարգանք. ուրովն տեսնեմք վեհափառութեան ներկայութեամբն աւելի մեծարոյ կերպարանք մը տող ուղեցիք տնոր անմոռաց երանաւորութեանն, զոր այսօր կ'ընծայէ 'ի յիշատակ վերանորոգեալ ազգութեանս մեծ թագաւորին:

«Առ գործադիր յանձնաժողովն, յառնա վենետիկ, պարասուպաշաճ շնոր-

հակալիքն կը մատուցանեմ, որ մեր հա-
մաշունչ զգացմանց թարգման, գիտ-
ցաւ 'ի կատար հասուցանել իրեն
յանձն եղած վսեմական զործն: Գործ-
արժանաւոր իւր շինողին, յոր ուղղեց
զնա իւր արուեստին մէջ ներհոռն վարժ
ձեռքն, իւր հայրենեաց խոր սիրոյն
ներշնչումն. գործ՝ արժանաւոր իւր վար-
ժապետին, որ այնչափ կենդանութիւն
աղդեւ զիտաց 'ի պղինձս, և այնպիսի
վսեմ կերպարան մը ապաւորել, մշտն
ջենաւոր պահելով զնա 'ի զարմացումն
և 'ի յիշատակ առյապաղ եկելոյն:

« Վենետիկ պիտի պահպանէ զար-
ձանս, իւր իւր պատմութեան լրութեան
սրբազան իւր մի. և իւր երկարատե
ցաւոց և արժանաւոր փրկութեան խն-
դին թանկագին և խօսուն յիշատակ
մի: Հնչեցէք 'ի աօն, ո՛ր պղինձք Սուրբ
Մարկոսի. ձեր հզօր վանդն հնչեցուցէք,
որ դարբնով հզօրեղապէս ողջունեց
քաղաքիս յատուկ իտալական փառքն
ու պարծանքն:

« Մեր լճին խաղաղ հորիզոնին հա-
մար՝ յաղթութիւններ աւետած է այս
մեծապայծառ հնչիւնս. զանկատակածն
Եւրոպէ՝ ազատեալով 'ի բարբարոսա-
կան սպառնալեաց, և յաւուրս վտան-
գաց՝ վառելով ժողովրդեան մը հաս-
տատամութիւնն՝ որ վէճպէտ սակա-
ւածեռն և ուժաթափ, այնու հանգերձ
զօրացաւ 'ի մարտ և զիտցաւ յաղթել
այնչափ զօրութեան՝ համախմբեալ յօ-
տար և 'ի մերային զինուոյ՝ յեղբայրա-
սպան դաւաճեցութիւն:

« Սակայն ոչ երբէք այնչափ աւելի
ներդաշնակօրէն հնչեց ձայներնիդ, ինչ-
պէս յաւուր՝ յորում խառնուեցաւ ար-
ձագանգնիդ 'ի մոլեհախանձ ծափա-
հարութիւնս մեր, ընդունելով զառա-
ջին թագաւոր Իսաաիոյ, որ սոսա կու
գար վերահաստատել առաջի սրբոյն
Մարկոսի՝ զգաշն՝ եթէ Իսաաի ա-
զատ է մինչև ուր կը ձգին իւր երից
ծովուց սահմաններն:

« Խորաքնինք և բանահիւսք Միջին դա-
րուն և արդեացս ժամանակի, անսահ-
ման ինքնիշխան տէր մի կ'երևակայէին,


որ Իսաաիոյ հասարակաց փառքն պա-
հելով, յինքեան պիտի միացնէր՝ 'ի
հզօր միութեան այս լատինական եր-
կիրս: Ցանդէի իսկ՝ ոչ ինչ նուազ բեր-
կրական մաղթանք թուեցաւ, որք 'ի
միջին անտառայն Գերմանիոյ կ'իջեցնէր
զիշխան մի կայսրութեան ժառանգորդ
'ի թագաւոր Իսաաիոյ. և կ'անիծանէր
զհռոտողս և զԱլպերտ գերմանացին
զինքն այսպէս անսանձ վայրագու-
թեան մէջ ձգելուն համար:

« Իրեն հետ և իրմէ վերջ՝ 'ի զուր կը
փնտռէին զհզօրն, որ 'ի աղմոյ պիտի
հանէր զանկեալն. մինչև ուր ուրեմն
յետ այնչափ կատաղութեան 'ի միոյ
կողմանէ, յետ այնչափ մեծամեծ պա-
ռակտման ժողովրդոց 'ի միւսմէն, ա-
կընկալութիւն մի երեւեցաւ փայլել 'ի
Ռինեցո աշխուական հողին, և 'ի վայ-
րագ՝ բայց անմիտութիւնով զա-
լենտիանոսի:

« Այլ շատ տարբեր չաւղաւ, շատ
տարբեր եղանակաւ Իսաաիոյ պսակն,
'ի մեր բաղդ՝ եղաւ 'ի զլուխ իտալա-
ցի իշխանի:

« Այս նախընտիր միացուցչին այնր
ժամանակաց կը պակասէր Իտալիա:
Իտալիա՝ կանգնուած միաձայն հաւա-
նութեամբ և պառակտեալ ժողովրդ-
դեան զարթուցեալ մոտաց խղճիւ:

« Վիկտոր Էմանուելի մեծ զաղափա-
րին՝ լրութիւն եղաւ. Նա ինքն ակնկա-
լեալն այլաբանական վելտրուսն, այն-
չափ ազգաց լռելեայն խորհողաց և
բանաստեղծից, հայրենի գործոյն շա-
րունակողն՝ ամբարձաւ 'ի դալ ժամա-
նակաց և 'ի կոտորել ճակատագրաց,
զուգելու համար 'ի հաստատուն հան-
գոյցս վերանորոգ ազգութեան: Իւր ա-
ռաջիկա՝ պայծառ ծնունդ իտալական իշ-
խանաց փառազարմ ցեղին, խննարհե-
ցան զօրաւոր և հաստատուն կալքերն,
որ այլազան միջոցներ, ուրիշ հաստա-
տութիւններ խորհէր էին. և երեւեցաւ
միապետութիւնն՝ սրբազան դրօշ միա-
բանութեան, նշանակ միութեան, յա-
ռաջագիմութեան և զօրութեան, զօ-
րաւոր նշան զօրաւորագոյն ապառնույ:



ՆԿԱՄ. Մուսլին զխոն:

« Լիջիր յաւերժա-
կան, սրբազան հայրե-
նիք: Ուխտան գործն զե-
նեակեցի մը կը խորհէր
իւր քաղաքին համար,
ըլլայ քեզի բովանդակ
խաղական սրտի ուխ-
տըն, ամէն անգամ երբ
ինչ և իցէ նշանաւոր
պատահար զարթուցա-
նէ մեր վերանորոգման
մեծամեծ յիշատակքն:

« Լէր յաւերժական
բո անցեալ փառայդ-
մէջ. ի սիրտս մեծամեծ
արանց, որ զարթուցին
զքեզ ի գերեզմանէ,
ի զօրութիւն հաստա-
տութեանցդ. ի վե-
հանձն՝ այլ խոհմու-
թեամբ զործադրեալ
մտածութիւնագ, ի յա-
րաակ կամն ամենայն
որդւոյդ զքեզ յարգե-
լի և մեծ ընելու համար:

« Արքայ, մեծ թա-
գաւորին պատկերիս
առջն, որ ետ քեզ ընդ
արեանն՝ սէր և գութ
առ ժողովուրդդ, քեզ՝
որ ի սէրդ այդ գիտցար
այդպիսւոյ հօրդ օրինա-
կին հետեւելու, կը հա-
ւատամ քեզ յանուն
վենետիկ և անխախտ
հաւատօք՝ թէ քան ըզ-
կճեայս և քան զպղին-
ձրս այս՝ աւելի պիտի
տեւէ յարգանաց սէրն
որ կը միացընէ զիտա-
լացիս առ օգոստափառ
տունդ, և այս արձա-
գանգս պիտի հնչեն ընդ-
դարս զճայնն՝ զոր աստ
ջերմ եռանդեամբ կա-
ղաղակեմք ի սրտից մե-
րոց. Կեցցէ՛ թագա-
ւորն »:

Այս ազնուական խօսքերուս՝ ժողովուրդն եռանդնալիր ծափահարեց։
 Յետոյ թագաւորն արքունականօքն հանդերձ փայտակերտէն իջնելով՝ դարձան իրենց մտկոյին, յետ սակաւ մի կանգ առնելէ Հեկտոր Ֆերրարիի համբաւաւոր սրճանին դիմաց։

Դարձն 'ի նաւակայիցն յարքունինս՝ ոչ ինչ նուազ շքեղութեամբ կատարուեցաւ հրանօթից շառաչէն և ուղեկից բազմութենէն որ Սուրբ Մարկոսի բովանդակ լինէր բռնած էր նոյն երեկի հանդերձանաց ճոխութեամբ բռն։ Կապառայոյն լինն ջուրքն անդրադարձնելով այս սրտի և արուեստի տօնախմբութիւնն՝ կրկին գեղեցկութիւն կը յաւելուր։



Այս իրիկուն տեղի ունեցաւ ևս մեծ լուսաւորութիւն մը։ Լուսաւորեալ ասպարիզին տարածութիւնն անհուն էր։

Հարիւր հազարէ աւելի սպիտակ, կարմաւ, դոյն և կանաչ զանազան ձեով յարմարեալ կտն թեղիք, հիանալի լուսաւորութիւն մի սփռեցին Սուրբ Մարկոսի բովանդակ հրապարիչ լինն վրայ, որոյ եղերքը կ'ամբողջանայ վիկտորիանուելի արձանն և որուն վրայ աշխարհահանդէսն իւր շէնքովն կը տիրէ։

Սկսելով 'ի հրապարակէն, և հետեւելով Բակրաւոնի ափունց՝ մինչև 'ի հասարակաց պարտէզն, անտի դառնալով և պատելով զՍուրբ

Գէորգ Կղզին, զմարտաւունն և զՍիլուդէ, կը յանգէր 'ի սրճանոցն որ 'ի թաղաւորական պարտիզին։

Երևակայականի և ճարտարապետականի երկու ճիւղերէն՝ վերջինս յաղթան հռոյնք։

Լոյսն ճարտարապետութեն կը գծադրէր հիանալի ներդաշնակութեամբ զսիւնս հրապարակին, զբովանդակ գեղանկար կորնթարդ ափունս Սկրապիոնի, զանդրիական պանդոկն՝ որոյ տառալի կանդնուած է վ. Էմանուելի արձանն։ Այլ գեղեցկապոյն փառարանն էր Սուրբ Գէորգ Կղզին, որոյ եկեղեցոյն պալատախանան ճակարուն սրանչելի կը ցոլայր 'ի խորանկար միտանն, վերուստ 'ի վայր լուսաւորեալ հրեղէն ներդաշնակ բազմադունեան գծերով։ Ոչ ինչ նուազ հիացուցիչ էր և մարտատան գեղատեսիլ անկիւնն, թագաւորական պարտէզն՝ 'ի լճակէն հայելով՝ հսկայակերպ և մաքայածին լուղական դրախտ մի կ'երևէր։

Այլ ամենայն մտացածն՝ երևակայական էր։ Լուսաւոր ծաղկունք և մեծահասակ ծառք՝ նման զարգարուն բուսաբերութեան մը կը պատէին զհրեղէն ձեռակերտօքն։ Լուսաւոր մարդարիապք ցանեալք յեղերս Սուրբ Գէորգ Կղզոյն, յերեսս ջուրք իբրև անշարժ աստեղաց քոյլք կը ճառագայթէին 'ի ցոլացեալ լճին, զոր հրացայտ աւաղանքն զեանդեալք 'ի լայնադոյն նիստա ափունց քաղաքին կը շողայընէին, կամիջաց վրայ մեծամեծ կամարք կերպարանեալք 'ի

բուստ 'ի գալնի տերևս, փունջս ծաղկանց, որոց մէն մի խումբս առաւելաւ գոյն լուսոյ՝ կապակցեալ էր իւր մերձաւորին՝ նուազագոյն լուսոյ չլիցայլ մի։

Ի ժամ ալի՜ երեկոյի՜։ Մեծ Զրանցքն ահաւոր հետք մը լուսոյ կ'երեւէր։ Հաղարաւոր մակոյկը ըստ ամենայն տաքաղու և մեծութեան՝ գնդեցկապէս լուսաւորեալ վեհեօրէն լապտերօք, իրարու ետեւ կ'ուզող էին՝ 'ի լուսաւորութեան վառարունն, 'ի ճառին Սուրբ Մարկոսի։

Ի սկզբան հողմն կը սպառնար պատրաստութիւնն աւերելու։ սակայն յետոյ 'ի սպառն նուազելով՝ խաղաղութիւն մը տիրեց ջրոյն երեսն, որով և ամենայն ակնկալութենէ վեր տեսարան մի բնւայեց։

Գեղեցկագոյն մասերէն մին կրնայ համարուիլ հոն խարոխեալ շոգնուէլոց լուսաւորութիւնն, յորմ 'ի մասնաւորի փայլեցաւ ճաշակաւ Հնդկ անդլիական ընկերութիւնն։ Դուսաւորութեանս ճարտարապետական մասն զբրեթէ դիւթական էր, որովհետեւ ընդարձակագոյն կ'երևէր քան ինչ որ էր լուսաւոր միջոցն, հորիզոնին և երկնից խոր մթնազոյն ենթակային վրայ։

Ահա մար բազմութիւն մը մասնակցեցան տեսարանիս։ ամենայն տեղ ուստի կարելի էր տեսնել զլուսաւորութիւն՝ լի էր հանդիսեօք։ Ի ժամ մի՜ յետ կէս դիչերոյ, գեռ ևս կը շարունակէր, անհնար էր չըջագայլլ 'ի Սկիափնի։

Գեղեցիկ մտածուած և դորձագրեալ լուսաւորութիւնս՝ պոհացոյց զտեղոցիս ևս առաւել զօտարականս։

Թագաւորն և թագուհին իրենց նաւական մասնակցեցան հանգիսիս։



1 Մայիս — երէկ՝ քաղաքագլխաւ կան հանդէս մ'էր, այսօր արուեստից տեսնախմբութիւն մ'է։

Վենետիկ երէկ արձան մը կը կան-

դնէր Իտալիոյ աւաղին։ Թագաւորին, այսօր՝ արուեստական աշխարհահանդիսին սրահին կը բանայ։

Իտալիացի համախմբեալ արուեստագէտք, որք 'ի հանճար, 'ի տաղանդ և յերևակայութեան և 'ի զգացման՝ իրարու հետ մրցեւ էին, վենետիկ առնոց սիրայորդոր ասպնջականութիւն կու տայ այսօր։

Այս տաճարիս մէջ՝ յորում արուեստըն հետեւած է բնութեան, այս քաղաքիս մէջ՝ որ տեսաւ զփառս Դիցիանու, Պէլլինիի, Թինդորեզզիի, Բալմայի, Վիգորիի, Սանսովինոյ, և Լամպարտիի, իտալիացի արուեստագէտք պիտի զըռնեն սիրտ ու միտք կարողք ըմբռնելու և դնահատելու իրենց արգար վաստակին։

Յետ Դուրինի՜ 'ի վենետիկ սրտուած էր յաջորդ ազգային աշխարհահանդիսին նիստն։ փորձն ցուցած ըլլալով որ չըմուն աշխարհահանդէսք աւելի լուսահամարտասիրանած են իտալական նկարչութեան ոգւոյն, որ ըստ փոխելոյ տեղեաց՝ կամ լաւ ևս ըսելով, ըստ փոփոխելոյ արուեստական կեդրոնի՜ իւր ձևն և կերպարանն փոխած է, և՛ օժտնդուած է աւելի հզօրագոյնս համբաւելու զարուեստագէտս, և ժողովրդոցն աւելի սիրել տալու զարուեստս։ Շատ արուեստագէտք իրենց համբաւն չըմուն աշխարհահանդիսաց պարտաւ կան են։

Ուստի և իտալացի արուեստագէտք մեծ խնդութեամբ ընտրեցին զվենետիկ քաղաք, և՛ յօժարութեամբ փաթեցին ձեռնառու ըլլալ և իրենց համբաւոյ նիւթ հայթհայթելու և հողալու։

Աշխարհահանդէսս՝ կը տիրէ բովանդակ Սուրբ Մարկոսի լճին վրայ, իւր արտաքին զարդն՝ յունական տնով է և ազգաւ գայներով, յորս կը տիրէ առաւելագէս կարմիրն և կապտագոյն։

Ի ներքստիկոյն սրահք մեծ խնայութեամբ և իմաստութեամբ կառուցած են։ նկարուց սրահքն 'ի վերուստ ունելով զըռն, իսկ քանդակացն՝ 'ի կողմանէ վերինքս կը զբաւեն ևս

չէնքին կիսաբոլորին
երկու սրահքն, և հոս
լոյսն կը տեղոյ 'ի վե-
ջուստ քանդակացն
վրայ:

Սրահից ներքին
զարդքն ամենապարզ
են, այնպէս որ աչքն
իւր ուշադրութիւնն
չի վերցընել 'ի ցոյց
հանուած և զրուած
դորձերէն:


Բովանդակ աշխար-
հահանդէսն կ'ընայ
ինն մասն բաժնուիլ:
«Առաջին» մտց մեծ
սրահն զամաքի կող-
մանէ, արուեստից մա-
սին համար, յորում
կը փայլին վենետիկոյ
ապակետք, յախճա-
պահեալք, միւսիոնք և
այլն:

Երկրորդ՝ առաի
մինչև 'ի կիսաբոլորին
մասն՝ ինն սրահք, ե-
րեքն նկարչութեան,
մին քանդակաց, և
այլ հինգ դարձեալ
նկարուց:

Երրորդ՝ կիսաբո-
լորն, քանդակաց
մեղհալանեալ:

Չորրորդ՝ այն մասն
որ կիսաբոլորէն 'ի
բլրակն կ'երթայ, վեց
սրահք, երկուք նկար-
չութեան, մին քան-
դակաց, երեք այլք
նկարչութեան:

Հինգերորդ՝ կիսա-
բոլորի մեծ սրահէն
մինչև ութանկիւնի
զահլիճն, նկարչու-
թեան յանկացեալ
վեցերորդ ութան-
կիւնի զահլիճն, ա-
րուեստից սեպհակա-
նեալ:



ՔԱՆԴԱԿ. ԵՐԿՐՈՐԴ. ՊԻՍՏՆ:

Եթե՞ներորդ՝ ութանկիւնի դահլիճէն մինչև 'ի բլրակն՝ կարգ մը սենեկաց, յորոց երկուքն նկարուց, մին Ս. Մարկոսի լուսանկար տեսարանաց, այլ մի նկարուց, և Տեսադածն՝ արուեստից:

Ութերորդ՝ փոքրիկ թեւն աշխարհահանդիտին, որ երկու զլսաւոր թեւերն կը միացնէ, ճարտարապետականի և գծագրութեան և յրաներկի սեպհականուած:

Իններորդ՝ ութանկիւնի դահլճին որ մայրց սենեակն, ոսկերչութեան և գոհարեղինաց:

Բաց աստի կայ սրճանոց մի, արուեստագիտաց համախմբուելու տեղ մի, ձիաստան, թղթաբերաց տեղի, հեռագրատուն, հեռաձայնատուն, պահապանաց բնակարան, և այլ բազում տընակք լրագրավաճառաց, ըմպելեաց, քաղաքականաց, և այլն:

Ասկէց ընթերցողք կ'իմանան՝ որ տեղւոյն ամբողջութեան մէջ ամէն բան մտածուեր և հոգացուեր է, որպէս զի այցելուաց ամենայն հանգստութիւն և պարտութիւն չհորհուրի:

Այս ամենայն պատրաստութիւնք քրիստ վերջայած՝ աշխարհահանդիտին քացման քոնի մի ժամ մնացեր է:

Միջօրէէ 'ի վեր շատ կանայք և արքանոր զլսաւոր մտից քով կեցած, իւրեանց տոմսակով 'ի ձեռքն կը սպասէին բացման:

Ի կէս աւուր հրաման տրուեցաւ հրաւիրելոց մանկ 'ի մեծ դահլիճն, յորքա կը նշմարուէին ծերակոյտք տէրութեան, երեսփոխանք, հիւպատք, վաճառական ժողովոյ անդամք՝ նախադահլին հանգերծ, որք թագաւորին գալտեան կը սպասէին:

Յանկարծ ութուն վարժապետաց երաժշտութիւնն հնչելով, խմացուց նորա դաշն՝ Յիրտի լճին վրոյ յերեկան կու գար երեկի և նախընթաց աւուր մողական տօնախմբութիւնն, 'ի զարմանալի վենետիկեաց և առաւել ևս օտարականաց:

Վենետիկ՝ փարթամ և հզօր իշխողն ծովուց՝ միւսանգամ անոր ջրերուն

մէջ կը սփռէր իւր մկառնն, թաւիչն և ոսկին: Հանգէս մ'էր, ճոխութիւն մը լուսոյ, հարստութեան, գեղոյ, արժաւանոր յաղթանակ մը, զոր արուեստք պիտի ստանային աշխարհահանդիտին պաշտօն մէջ:

Թագաւորն զօրավարի համազօրեւտով մտաւ 'ի մեծ դահլիճն, իւր հետըն էին արքունականք, Գրիսփի և Պրիլին պաշտօնեայք, քաղաքիս անդիկուն կոմս Սերեկոյ. քաղաքապետն Մաւսի, աշխարհահանդիտին նախագահն կոմս Բարատորոյի, փոխան նախագահի կոմս Գիէքօլօ, ճարտարապետն Բելլիկոն, Բաղի զօրավարն, թագաւորին անձնապահապանն և Բարիչ Նշանաւոր անձինք: Ասոնց դիմաց անդիկուն հեռակալ նշանաւոր ճառք խօսեցաւ:

« Տէր արքայ »

Վենետիկ՝ հարգւածեալ նորանոր վրձն, միթարեալ քաղաքեալ իւր տխուր աւուրց մէջ, Ձեր օգոստոսիառ ներկայութեամբն, արիացեալ Ձեզ վեհանձն խօսքերով, կ'ողջունէ զՁեզ եռանդնալիւր. և իւր փողոյաց հեռաւոր անկիւններէ, սկսեալ 'ի պատրիկեան պալատէն մինչև 'ի քանաստեղծական խրճիթն մեր ձկնորաց՝ Կաղապակէ, կեցցէ արքայն:

Գահութիւն Ձեզ, արքայ, Ձեր քաղաքիս վրայ ունեցած սիրոյն հաւմար. գահութիւն Օգոստոսիառ Թագուհւոյն, որ հաճեցաւ իւր քարծր պաշտպանութիւնն շնորհել թղթապետ արուեստից հանդիսի, որոյ համար յուսամ եթէ համապատասխանէ արժանապէս անկալեացն, և հազորք ըլլայ ընտիր և բարձր զգոցման, բարեւոյն և զեղոյն՝ վստահութիւնի և աղնուազունի 'ի կանայս իսախոյ:

Ալլէլ զիտէ վենետիկ, շնորհաձէլ Թագուհւոյ, որպիսի երախտագիտութիւն պարտական է Ձեզ, ալլէլ գիտէ որչափ հաճոյ է Ձեզ այս յարաւալ յաջորդութիւնն գունոց և լուսոյ, փայլման և պտուերի, որովք զարդարած է զնա քր:

նութիւնն. որչափ ընդունելի է Ձեզ
իւր կանոնաց վստահ և մտերիմ՝ յար-
գանքն, որք առաքանոր աւելի քան այլ
ամենայն ուրիշ կ'ըսեն Ձեզի համար.

« Բոյր մեր անգրասիկի Մարգարիտ »:

« Այլսարհահանգիսին յանձնախումբ
ժողովոյն՝ վննետիկեոց արժանաւոր
երախտադիտութիւնն կ'ընծայեմ »:

« Դիւրին գործ չէր վննետկոյ համար
կատարել իւր յանձն առած գործն, և
ազդային արուեստին նոր տապարէզ մի
բանտէ: Եւ եթէ ամենայն ուրիշ բաղում
դժուարութիւնք, ընք առաջ կ'եննեն,
առաքանոր շատ աւելի էին, բազմաթե-
սակ և նորանորք, մազաի և շատերուն
յանդգնութիւն մի համարուեցաւ փորձ
փորձելն, ոմանց ձաւ տարակուսական
այս փորձոյն եղբն »:

« Բոյս լոնիւք թէ արգելնքն այնալի-
սիք ըլլան որ պատիւ բերեն քաղաքիս,
և քաջալերութիւն այն քաղաքացւոց՝
որ իրենց ապագայիկն մէջ յառաջա-
նալու դեռ շատ միջոց ունին: Կը յու-
սանք թէ մեր քաղաքին համար՝ կեն-
դանութեան նոր հաստատութիւն մ'ըլ-
լայ: յարտաւ յառաջախաղացութեան
յորքոր մը, և արժանեաց տնտրոս առ
ազգն բովանդակ »:

« Ես յանուն զենեակոյ՝ եռանդուն
շնորհակտութիւն կը մատուցանեմ
այն արուեստագիտաց հոս ժողովելոց,
որք յօժար կամօք պատասխանեցին
կոյմանն և հրաւիրանաց, որք դատաւոր
բազմեցան ընտրութեան փափուկ և
դժուարին պաշտաման մէջ, և կամ
փութալին ազնուական մրցմանն այն
եռանդեալք և յօժար մտօք, որ այն-
չափ մեծ մասն կ'աւնենայ ստեղծական
կարողութեան և գեղոյ՝ ի մէջ ամենայն
գործոց »:

« Քաղաքս իրենց նոյնչափ սիրելի ըլ-
լայ ի ներկայս, որչափ որ է իւր հոշա-
կանն և իւր վարժապետաց անմահա-
կան երկամբք: Աստ ուր կը թափառի
առկալին մեծ մասն այն հանճարոյ՝ որ
առաջնորդեց ձեռնն և երանգներ
տուաւ Պեղիկի, Գարբաշի, Դի-
ցիանու, Ճիօրճիօնի, Պաւղոս վերսնե-

ցւոյն, Դինգորէզդիի և բովանդակ իրմ-
բին երեսակայական և հրապուրիչ նը-
կարչաց վննետիկեան դպրոցին, աստ՝
որ կը տնէ և միշտ պիտի տնէ իւր
լճակին խաղաղ ալեաց մէջ տառանդ
հնոյն յաւերժահարին հրապոյրն, և
այս՝ այնչափ արեւելեան՝ որչափ և ի-
տալական միջնորդոսն մէջ, այս յարա-
տն շնորհաց զօրաւոր ներդաշնակե-
թեան մէջ, կարենային իրենց ալ նորոս
նորակերէնչումն և նիւթ դոմեկ նորանոր
խիղիւսմանց, միշտ գեղեցկագոյն յօրի-
նելու և կենդանանորոգ պահելու հա-
մարտեաց մօրս արուեստից պատկն »:

« Մեզ համար ստոյգ ուրախութեան
աւուրք են, յորո՞ ի մի վայր և ի մի մի-
առն կը ժողովին մէկ նպատակաւ ի-
տալիոյ այնչափ կողմանց որդիքն: Այս
ազգային տնտեսութիւնն կը բեղ-
նաւորին մեծագոյն ևս պաղոց արգիւ-
նըս, քան թէ յառաջադրեալ սոսկ մը-
տաւորական և արուեստական յառա-
ջադիմութիւնն: Զօրաւոր կապ մի են
հասարակոց հայրենեաց գաղափարին,
և հաստատունն միութեան սկզբանց,
պարտ և ջինջ եղբայրութեան ողջոյն,
որ կը ջանայ և նա ամրապնդել անոր
զօրութիւնն ազնուական և ունիւ մրց-
մամբ, քաղաքական և մեծութեան որ
և է պաշտաման մէջ »:


« Բարի գալուստդ ձեր ուրեմն, ազ-
նուսմիտ հիւրք. կը բարեմաղթեմ ձեզ
որ վննետիկ կարենայ համապատաս-
խանել ձեր արժանեայն՝ զձեզ ընդու-
նելու պատուոյն մէջ, այն բարեյոժար
կամօք, որ անմեղադիր կ'ընէ զնա եթէ
չկարենայ ալ հաւասարիլ իւր անցե-
լոյն փառաց ու պայծառութեան »:

« Եւ այժմ կը թողում խօսքն առ այն՝
որ աւելի յարմար և ազգու խօսքերով
կրնայ խօսիլ այս աշխարհահանդի-
սիս վրայ՝ զոր ևս բանալիք այսօր »:

Ետ Մնդիկոսին խօսեցաւ կոմսն Բա-
բատօրօյի, աշխարհահանգիսին յան-
ձնաժողովոյ նախագահն »:

« Տէր արքայ »:

Խոտալական արուեստն, այնչափ ճոխ



իւր Թւանդութեամբ
 և փառք, կը հաստա-
 տէ այսօր պատուաւոր
 փորձով իւր սէրն ու
 խնամքն առ այն աման,
 դռն իւրն, միանգա-
 մայն և իւր փափակըն
 այն փառացն հաւա-
 քարկը:

« Եպտեցաւ այս ան-
 ճիւղի վրայ միջման Պ.
 Վեհափառութեան
 Թագուհիէն ընդ իւր
 և անուանիքը Վարդա-
 պետութիւնն, ամէն
 պաշտպանաց շնորհա-
 ղ զոյն և յուսակն: »

« Թերեւ մից մեծն Ե-
 աւելի հանդիսաւորն
 թիւն և Եռանդ մը տա-
 լու համար, համաձայ-
 նեցաւ ևս Վեհեմէդ
 անունն, երեւոյզոյն
 յարուստական քա-
 ղաքաղի մերոց: »

« Այսօր Չեր Վեհա-
 փառութիւնն իւր
 օգոստափառ հերկա-
 յութեամբն պատուե-
 լով այս բայման հան-
 դէսս, երաշխիք մը
 կու տայ այն յարածե-
 փութոյն որով կը հե-
 տարնէ, կը քաջալերէ
 և կը հովանաւորէ ազ-
 դային որ և է յառա-
 չագիւմն թիւն, այնպի-
 սի բարեյօժար կամեք
 որ յամենայն ժամա-
 նակի և ի ներկայ իւր
 սրտաշարժ և անմոռ
 նալի փորձով հաճե-
 ցաւ ցուցանել այս մեր
 քաղաքին: »

« Յանուն միւր որ
 առաջարկեց, կարգմ-
 դրեց և կանոնաւորեց
 այս աշխարհահան-
 քն: »

դէսս, յանուն իտալացի արուեստա-
դիտաց որ իրենց աշխատութեամբ
մասնակցեցան անոր, կը մատուցանեմ
Ձեր վեհափառութեանն յայտնի շնոր-
հակալիքս, և կը խորեմաղթեմ որ աստ
հաւաքեալ իտալական արուեստին մը-
տածութեան, գործունէութեան և բեղ-
նաւորութեան օրինակքն արժանաւոր
ըլլան մեր անցեղոյն փառաց և արքա-
յականս շնորհին:

«Ասոր նման յոմենայն պարագայս
հայրենիքնիս վերանորոգելով իւր եր-
կարժամանակեայ խաթարեալ դուր-
ծունէութեան դարձուցմամբն և յա-
ւերմամբն, կարենայ օրինաւոր պարծա-
նաց պատճառ նշանուլ, և անմուսկե-
րախտագէտ գանձի առ նոսա՝ որք
յուսոյ, յարատեւութեան և անձնա-
նուէր զոհից սքանչելեօք՝ ի նոր և
յարժանաւոր և գործունեայ կեանս կո-
չեն գնա, և նախ քան զսոմենայն արքա-
յական, հօգօր, հաստատուն և փառա-
հեղ ազգանորհմիս, որ անոր խախտն
միշտ վարդապետեցած է:

«Այսպիսի ներքին և մշտնջենաւոր
միտութեան ազգային զարթոյցեալ ե-
ռանդան ցոյցելով, և մեր ոգւոց կեն-
դանի երախտագիտութեամբն, ուրախ
եմք, ու թողաւոր, ընծայելու Ձեզ
յայտնի ազատոյց մը՝ միացնելով ա-
րուեստին նոր միջման բացման հետ՝
նաև զկանգնումն արձանին զոր վենե-
տիկ ազատացեալ կը նուիրէ Ձեր ան-
մահ յենօրին:

«Լաւ գիտէ իտալական ժողովուրդն
թէ ոչ մի յարգութեամբ ընծայ կրնայ
Ձեր սրտին աւելի սիրելի ըլլալ, բայց
այն որ իմացընէ և զղացընէ զանքակ-
տելի կապն որ իւրօրբանչիւրոց բախտն
կը միացընէ Ձեր օգոստափառ տան
բազմին հետ:

«Այս զգացմամբ, Տէր արքայ, ա-
ռաջարկուեցաւ հրաւերն զոր ներեցիք
ընդունել, զոր և հաճեցայք իսկ սի-
րով ընդունելու: Այս զգացմամբ է
այժմու աղայանքս մեր, որպէս զի հա-
ճիք շնորհել մեզ յանուն Ձեր և շնոր-
հազարդ օգոստափառ թագուհոյն,

բռնալ այս աղբային աշխարհահան-
դէսս:


Հուսկ ուրիմն, յետ Բարատօքօլի
կոմսին, Գրիսբի ներքին գործոց պաշ-
տօնեայն՝ իւր հետեւեալ ճառը կարդայ:

«Տէր արքայ:

Շնորհազարդ թագուհի:

Այս աւուր հանդէսս, որ Ձեր վեհա-
փառութեան ներկայութեամբն պոյ-
ծառադոյն ևս կը հանդիսանայ, չէր
կրնար վենետիկէն զատ արժանաւորա-
գոյն անդ մ'ունենալ: Մեր չորս կողմն
ամենայն ինչ յաղթանակ կը քարոզէ,
երկիցս յաղթանակ զինուց և արուես-
տից: Անուանքն Տանաօլայ, Շէնի, Պրա-
կափնի, Ֆոսկարինի, վենիէրի, վե-
նետկոյ անթիւ փառազարմ զաւակուն-
քն, կը խառնին ընդ անուանս Պեյլի-
նիի, Գարբաչիի, Բալմայի, Դիյիւսնու,
Դինդորէզգոյի, վերոնացւոյն, Դիէթօ-
լոյի և այլ հարիւրաւորաց ոչ ինչ նուազ
հռչակաւորք հանդիսացան:

«Յաճախ իսկ ըսուեցաւ թէ գեղ-
արուեստը գծողվուրդս կը ջլատեն, ա-
նոնց յաղթանակն՝ ազգի մ'անկումն
կը նշանակեն, թէ Սպարտա առանց
Մուսայից՝ յաղթեց մուսայանուէրն
Ալէնքի, թէ Հռովմ բարբարոս՝ յաղ-
թեց չնաշխարհիկ ծաղկեալ Յունաս-
տանի, որպէս և ինքն ալ յիւր կարգին՝
երբ ծաղկեցաւ, բարբարոսաց ոտնա-
կոխ եղաւ: Այժմ գեղարուեստը այնպիսի
յանցանաց պատճառք չեն. նա մանա-
ւանդ կը պատմեն՝ ստեղծելէ աւելի՝
մարդկան արարքն և խորհուրդք: Իսկ
որովհետեւ հարկաւորաբար պիտի ծաղ-
կին, երբ ալք մը կը սկսի ծաւալիլ, իր
փառաց ծայրը կը հասնի, և երբ իւր
հասունութեան հասանի, կը մերձենայ
յանխուսափելի կէտն, յորմէ անցին իւր
վայրէջն կը սկսի Անկեղծագոյն արուես-
տն՝ պատմականն է. պատմականն՝ իւր
ձգողական և բարձրագոյն կերպին մէջ:
«Վենետիկեան արուեստն՝ կարող է
ցուցանել զայս քան զամենեւին. որով-
հետեւ իտալական արուեստից վերոնո-



ԱՐՄԻՆԻՍՏՖ. ԳՐԱՆԻՍՏՖ. ԳՐԱՆԻՍՏՖ.

լուսման մէջ, սա դե-
ղեցկարար, իբր խօ-
սուն և հաւատարիմ
հայելի մ'եղած է հայ-
րենեաց նոր կենաց,
պատահարաց և բա-
րուց: Սա միայն փա-
ռացի հոտարակապե-
տութեան հետ միա-
բան էր, որ Ձեր հզոր
առմբ, ներկայացուած
ազգային միութեան
հետ կրնար խոնարհելը
Մեծամեծք. կ'աղչէին.
'ի նա, ամէնքն ահազ,
կ'ապրէին բարոյապէս
մտաւորապէս և նիւ-
թապէս, վենետիկեան
արուեստագէտք՝ չէին
արուեստին, վաճառա-
կանք, բայց արուեստն
էր՝ ընկերական վա-
ճառականութեան
բարձրագոյն բացա-
րութեանց մին և 'ի
թեա առիւծուն կը սա-
տանէր 'ի զբօսանալը.
ճին յւր փառքն բովան-
դակ աշխարհի հոշո-
կելու համար:

Արուեստին պգացու-
մըն՝ հասարակաց ժա-
ռանգութիւն մ'էր առ-
տանօր, իր փայլէր մե-
ծամեծ գործառ-
նութեանց մէջ, և նը-
շանաւոր էր իւր երան-
դոց հրապուրօմն ան-
մահ գործոց զծագրու-
թեան մէջ. 'ի գործա-
րանս՝ կը մացընէր
հրայրեաց վառարան-
ներ, և կը զորդարէր,
ազգատին խոհարհ
բնակութիւնն և պատ-
րէկին սակեփայլ պա-
լատն, յապաւելոյ և 'ի
վէտոյ: Արագնեօր

արժանաւոր սքանչելիք կը ստեղծանէր:

« Արուեստով է՝ որով շատ զարմա-
րանաց արտագրութիւնք՝ զոր հինն
վենետիկ — այսօր ալ նոյնպէս ըլլար —
'ի պէտք պերճութեան սահմանած էր,
այլոց ազգաց կը դրկէր իւր նաւերով,
որով և քաղաքացիք, վաճառականք և
մարտիկք՝ օտար վաճառաւորներու վը-
րայ կը մրցէին: Անով է՝ որ մետաքսե-
ղէն կերպարք, և վենետիկեան հայելիք
տակաւին ցայսօր կը ծածկեն գիշաւ-
նական բնակութեանց որմունքս 'ի Գաղ-
ղիա, յԱնգղիա, 'ի Գերմանիա և գե-
ղեցկադոյն կը ցուցանեն մեր արկնայքն
և քոտարս: »

« Անով է՝ որ փիւնիկեան ապակւոյն
գաղանկին գտնուելով՝ վենետիկ կը բ-
ցաւ մուսք գանել քիւր գոյնադոյն. ա-
պակեօք այնպիսի տեղեր, ուր անմա-
տոյց է՝ երեւելին եւրոպական ոտից, բա-
նալով այսպէս քաղաքակտնութեան
ուղին՝ պերճութեան պատրանօք: »

« Դարձեալ, արուեստով է՝ որ պա-
տերադմտկան սաբառութեամբ և կը
ճեպ փառահեղ յիշատակարանօք ձե-
ւացած վենետիկեան ճարտարապետու-
թիւնն, այնպիսի երանգոց և գծից աննը-
ման ձուլումն ստացաւ, որ հիացումն
կ'ազդէ դեռ ևս մեր սրտին մէջ, նման
երաժշտական ներդաշնակութեան մը:
Եւ եթէ արուեստն յաճախ՝ յաղթող
ժողովրդեան մը նիւթապէս մտաւորա-
կան զարգացման բացատրութիւն է,
եղտւ գարձեալ ընկճեալ ժողովրդեան
մը հեծեծմանն և բողբոն, երբ ամէնք
նիւ ալ յազատութիւն միացանք Ձեր
տան Աստեղն առաջնորդութեամբ. և
'ի լերինս իսկ, յորս շատ անգամ աղա-
տութիւնն կ'ապաւինի, միւսանդամ
անտի իշնելու համար յաւելեալ զօրու-
թեամբ պատերազմի դաշտին վրայ: »

« Արուեստը ալ պատերազմ մղեցին
հայրենեաց համար: Երբ մեր մէջ մտա-
ծութիւնն՝ իւր ձայնն պիտի չսնցնէր.
Սպարտակոս՝ իւր դամբանէն ապրս-
տամբութեան ոտըն շողացուց և ամե-
նուն սիրտը վառեց: Եւ երբ Եւրպէ
գրեթէ աւերել կը ջանար աշխարհին

պատմութեանէն իտալիոյ անունն, ա-
րուեստագիտաց փաղանդն, երեւելի ձե-
ռակերտօք ամէն լեզուօք այդ անունն
հռչակել տուաւ: »

« Հայրենեաց սէրն բաւեց քնշուշաւ,
յամին 1849, զվենետիկեայ այնչափ-
ղուցալն գործելու, և թերակողմն-
ամէն կողմերէ՝ զօրդին 'ի մի, յիղթա-
րութիւն զօգելու. բայց ո՞ կրնայ գրու-
ցել եթէ այդ սէրն՝ այնչափ մեծու-
թեամբ երկցած ըլլայ և այնչափ
դանչելիք գործած ըլլայ, առանց ա-
նոց արուեստական շրջակայից նախա-
պատրաստութեան և ազդեցութեան: »

« Արուեստին ուրեմն երախտագէտ-
ըլլալու ենք: վենետիկեան, Հռովմէա-
կան, Թուրանեան, Լոմպարտական,
Նեապոլեան, Սիկիլիան դպրոցն՝ մի
փառք մը կը կազմեն, իտալիոյ փառքն: »

« Իտալիան՝ առանց արուեստի, առանց
մատենագրութեան, առանց երաժշտ-
տութեան չէր կրնար երբեք կատարեալ
և ճշմարիտ իտալիա ըլլալ: Սակայն սը-
պէս զի նոր արուեստն փայլի, հնոցն
պէս, պէտք է մշակելու զնա, անոր ար-
ժանաւոր յիշատակութեան գործեր
կատարելով: »

« Այս բանն մեզի դժուարին չի կրնար
ըլլալ՝ եթէ միայն Ձեր օրինակին հետե-
ւինք, ո՞ Թագաւոր. այն օրինակին՝ զոր
ունեցանք նաև Ձեր Մեծ հօրէն, և Ձեր
հօր և իմաստուն. ազգատոհմէն, որ
կարծես իրեն սեպհականած էր: Սափա-
յից Պետրոս երկրորդի առածն « Իշխա-
նութիւնն յԱստուծոյ կու գայ, երբ 'ի
բարեւ ժողովրդեանն գործածուի: » »

« Այս մաղթանքն է, զոր Ձեր վնճա-
փառութեան առջև կը խոնարհեցնենք.
Արքայ, որ մեր հանդիսից և առաւել
մեր ցաւոց միշտ մոտենուցած էք. և Ձեզ
շնորհազարդ Թագուհի, որ բանաստեղ-
ծութիւնն էք թագուհւոյ հանդերձով,
և կ'ազգեմ ներել ինձ հրատարակելու
յօգոստափառ անունդ. Ձեր՝ ազգային
գեղարուեստից աշխարհահանգէսն 'ի
վենետիկ բացուած ըլլալ: »

Ամէն ճառախօսք եւանդուն ծա-
փահարուեցան ներկայ ունկնդիրներէ:

Նոյցին վեհափառութիւնքն բազմու-
թեան հետ այց ելին աշխարհահանդի-
սին՝ սրահից: Աստ անդ երկարօրէն
կանգ առնելով, և յաճախ քաղաքիս Սրն
դիկոսին և տեղոյն իշխանութեան վե-
նետկոյ աշխարհահանդիսին լիովի յա-
ջողութեան վրայ խօսելով, որ անշուշտ
համբաւ պիտի հանէ և պարծանաց
տեղոյական յիշատակ պիտի թողու յի-
տալիս և արտաքոյ:

Սրահից շրջանն աւարտելով թա-
գաւորականք իրենց մակղկն իջնելով,
ճոխ կօնտօլայից և նաւակայ ուղեկցու-
թեամբ յանդուրձնի վերադարձան: Հրա-
նօթք կ'որոտային, և ժողովուրդն եր-
կայնաձիգ Սկիափնի փառնց վրայ հան-
դիստօնա՝ կը՝ ծափահարէին:

Այստեհետե աշխարհահանդիսի գը-
րունք բաց են այցելուած: Նկարչու-
թիւնն կը ցուցանէ իրենց՝ անդ՝ ի՞նչ
հաւաքեալ վեհետկոյ, Նէպօլի, ֆիւ-
մինթի, Լամպարտիոյ և Դոպաւնիոյ դը-

պրոյքն: Յամենուստ տեսարան երիտա-
սարգական բանաստեղծութեան աշ-
խուժից, անհուն տաղանդ մը գործա-
դրութեան, փափուկ բանաստեղծական
մտածութեանց, շրջուցիչ և ձգող ե-
րանդոց, զուրթի և համակրական հո-
փուական կենաց էջը, և մեքամաղձիկ
պատճառք և նիւթք:

Բանդակադործութիւնն՝ կ'ընծայէ
դեղանի քանդակս, արժանիս զարմա-
նաց, իրենց նորափայլ կիւրծ և տրուես-
տական նմանութեամբ:

Արուեստն՝ վեհետկոյ արդէն ծանօթ-
հաշակաւոր ապակեայք, իրենց հազար
ու մէկ պանազան ձևոց ներքե, փո-
րադրութիւն, փղօսկրի և փայտի վրայ,
նորադոյն և տնհաւատալի փափկութիւն
և ճարտարութիւն մը կ'ընծայեն, և իրա-
ներկն՝ այս վերջին ամաց մէջ դողցեմ
կատարած զարգացումն, սրով և տը-
դեացս ճաշակին առաւելուպէս համա-
պատասխանելու պտտին իրաւամբ քո-
տացած ըլլալն կը համատեղ արժանաւո-
րապէս յաշխարհահանդէսն վեհետկոյ:

• 2. ԳԵՈՐԳ ՊԱՅՆԱՆ •

Թ. Ռ. ՉԵԼՈՒ ՄԵՔԵՆԱՅ

Անդիական շրջափրք կը հուսկեն մեքենական
նոր գիւտ մ'ալ, ի պարծանաներկոյ գարուն,
ծնունդ մ'աւոյ Պ. Հասարակ ափրիկացոյ: Ինչ
որ միջև ցարգ ի լրագրաց տեղեկացած ենք,
այս մեքենայիս ալ և այլ հանգամանաց վրայ
սակաւ ինչ է և անհատօր: Իբր կազմութիւն
ամենապարզ պէտք է լինի: Կը՝ հաստատուի
մարդուս բազկաց ներքե ամուր կերպով՝ չորս
հանգուցիւք: Նշկարածին գործի մը՝ որոյ որ-
պիսութեան վրայ գեղ ամենին տեղեկութիւն
չունինք, կը գրուի թուղոյն կրծոց և կողից առ-
ջէ: Է այս գործին է՝ որ շարժումն կը պատճա-
ռէ՝ երկու թևոց, և կամ լաւ ևս՝ շատ մը փոքրիկ
աւազաւորից՝ որք իրերաց հետ միացած և որո-
շեալ գործով մը կը շարժեն: Երկու ելեկտրա-
կան կոշտներ հաստատուած թուղոյն կրծոց
առջէ՝ կը ծառայեն թևերը ի շարժման պա-

հելու, և կամ գաղաքելու ի բախելոյ ղոգմ: և
սու այս կը բաւէ միայն մարտրով թևթև մը տեղ-
մեկ գտնուիք:

Ասկան գործոյս գիւտն ամենուն մտաց մէջ
հետաքրքրութիւն զարթունցնելով, առջար-
կութիւն եղաւ հեղինակին՝ իրեն գիւտին ար-
դասիքը ցուցնել հասարակաց, հանդիսաւոր
փորձով մը, զոր կատարեց ամենայն յարգու-
թեամբ, բարձրանալով երկրէս 100 մեթրի չափ
և թռչելով ժամ մը ամբողջ: Ընթացքն ի սկիզ-
բան ծանր էր, սակայն երթալով կամաց կամաց
այնչափ երազեցաւ, որչափ կարող ըլլալու ըն-
թանալ ժամանակն մը մէջ վեց մըն: Երազու-
թիւնն մը՝ որ բաւական բան է:

Փորձոյս յաջողութենէն խրախուսեալ կապ-
մունեցաւ առժամայն ընկերութիւնն՝ ինչ պը-
գիւար մշակելու և կոտարեկադործելու: